



Աշխատություն 07(07), Յուլիս 2007, Երևան, Հայաստան  
Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC)

---

# Կրթության և առողջապահության ոլորտներում արտաքին վարկային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերը

Գագիկ Թորոսյան

*Հոդվածը պատրաստվել է «ՏԻՄ, կրթության և առողջապահության ոլորտների մոնիտորինգ և գնահատում ԱՀՌԾ շրջանակներում» ծրագրի շրջանակներում՝ Օքսֆամ ՄԲ աջակցությամբ:*

## Ներածություն

Հայաստանն արտաքին վարկային պարտավորություններ է ստանձնում տնտեսության տարբեր ոլորտներում ներդրումներ և զարգացման ծրագրեր իրականացնելու համար:

Կրթության և առողջապահության ոլորտներում, տարբեր դրամաշնորհային ծրագրերի հետ մեկտեղ նույնպես իրականացվում են արտաքին վարկային միջոցների հաշվին իրականացվող նպատակային ծրագրեր, որոնք, կարելի է ասել, համարվում են այդ ոլորտներում իրականացվող բարեփոխումների հենքը:

Կրթության և առողջապահության ոլորտների զարգացումը մեր երկրի ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող խնդիրներից է: Այս ոլորտների առաջանցիկ զարգացումը ամրագրված է մի շարք օրենքներում և երկրի ռազմավարական զարգացման փաստաթղթերում: Մասնավորապես ԱՅԴ-ով այս ոլորտները համարվում են ծախսային գերակայություններ և երկու ոլորտների համար ամրագրված է, որ պետական ծախսերը համախմբված բյուջեի ընդհանուր ծախսերի համեմատ աճելու են առաջանցիկ տեմպերով:

Որակյալ կրթության ապահովումը եւ դրա մատչելիության բարձրացումը դիտվում են, որպես տնտեսական աճի, աղքատության ու անհավասարության մեղմացման կարեւորագույն գործոն:

Իսկ Առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացումը, հատկապես բուժօգնության առաջնային օղակի, ԱՅԴ փաստաթղթով դիտվում է, որպես պետական նպատակային ծրագրերի հասցեականության բարձրացման եւ աղքատության հաղթահարման համատեքստում գերակա ուղղություն:

Վարկային ծրագրերն իրենց ոլորտային պատկանելիությամբ ունենում են ուղղակի և անուղղակի ազդեցություն: Մինչ օրս այս ոլորտներում վարկային միջոցներով իրականացվել են մի շարք ծրագրեր, բայց նրանցից միայն 5-ն են եղել հիմնականում կրթության և առողջապահության ոլորտների ծրագրերին ուղղված, որից 2-ը՝ կրթության ոլորտում և 3-ը՝ առողջապահության:

Կրթության ոլորտի վարկային ծրագրեր են՝ «Կրթության կառավարման և ֆինանսավորման բարեփոխումներ» ծրագիրը և «Կրթության որակի և համապատասխանության» ծրագիրը, որոնց իրականացման համար ընդհանուր գումարով ՀԲ-ից վերցվել է 24.3 մլն SDR վարկ կամ շուրջ 34 մլն ԱՄՆ դոլար:

Իսկ առողջապահության ոլորտի ծրագրերն են՝ «Առողջապահության ֆինանսավորման և առողջության առաջնային պահպանման» ծրագիրը, «Առողջապահական համակարգի արդիականացման» ծրագիրը և «Թռչնագրիպին հակազդելու» ծրագիրը, որոնց ֆինանսավորման համար ընդհանուր առմամբ ՀԲ-ից վերցվել է 24.6 մլն SDR վարկ կամ շուրջ 35.25 մլն ԱՄՆ դոլար:

## Կրթության բնագավառում վարկային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերը

Հանրակրթության ոլորտում 1996 թվականից սկսվեցին համապարփակ բարեփոխումները: Պարզ էր, որ բարեփոխումները պահանջելու են մեծածավալ ֆինանսական ներդրումներ և այդ տարիների հանրապետության բյուջետային միջոցների սղության պայմաններում հնարավոր չէր ներքին ռեսուրսների հաշվին իրականացնել նման խոշորածավալ աշխատանքներ:

Ֆինանսական միջոցների ներգրավման համար Հայաստանը վարկային միջոցների ներգրավման համար դիմեց ՀԲ և 1997 թվականին հաստատվեց «Կրթության կառավարման և ֆինանսավորման բարեփոխումներ» վարկային ծրագիրը՝ 11.1 միլիոն SDR ընդհանուր գումարով, որը համարժեք էր 15 միլիոն ԱՄՆ դոլարին: Ծրագրի ընդհանուր արժեքը գնահատվել էր շուրջ 23.9 միլիոն ԱՄՆ դոլար: Վարկը ՀՀ կառավարությանը տրամադրվել է 0 տոկոսադրույքով՝ 35 տարով, որից 10 տարին արտոնյալ է: Միևնույն ժամանակ սահմանված է վարկի սպասարկման վճար, որը կազմում է 0.75 տոկոս և 0.5 տոկոսի չափով պարտավորության վճար:

Վարկային ծրագիրն ըստ ոլորտային պատկանելիության ունեցել է հետևյալ կառուցվածքը՝ միջոցների 84 տոկոսը նպատակաուղղված է Կրթության համակարգին, իսկ մնացած 16 տոկոսը պետական և տեղական կառավարման մարմիններում կրթական ոլորտի կառավարման հիմնախնդիրներին:

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- պետական հանրակրթական հաստատությունների համակարգի կառավարման հետագա ապակենտրոնացում,
- դպրոցների կառավարման և ինքնակառավարման նորմատիվային - իրավական հիմքի կատարելագործում,
- հանրակրթական հաստատությունների ֆինանսավորման նոր եղանակի ներդրում, բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացում,
- ներդպրոցական կառավարման ժողովրդավարացում և անցում դպրոցական խորհրդի միջոցով կառավարման,
- մանկավարժական և վարչական կադրերի որակավորման բարձրացում,
- հանրակրթական դպրոցների ապահովում հիմնական դասագրքերով և այլն:

Ծրագրի ավարտը նախատեսված էր իրականացնել մինչև 2002 թվականի վերջը և ներկայում այն ավարտված է: Ծրագրի շրջանակներում վարկային միջոցներից փաստացի ծախսը կազմել է 14.5 միլիոն դոլար:

«Կրթության կառավարման և ֆինանսավորման բարեփոխումներ» ծրագիրը կազմված էր հետևյալ երկու ենթածրագրերից՝

1. Դասագրքերի հրատարակում և բաշխում

2. Բարեփոխումների կառավարման նյութատեխնիկական բազայի ստեղծում, որն իր հերթին ունի երեք բաղադրիչ.

ա/ Կրթության համակարգի կառավարման և ֆինանսավորման բարեփոխումների ռազմավարության մշակում և իրականացում,

բ/ Դպրոցների ինքնավարության անցնելու նպատակով ղեկավար կադրերի վերապատրաստում,

գ/ Դպրոցների բարելավման ծրագիր:

Դասագրքերի հրատարակում և բաշխում ենթածրագրով ծրագրի իրականացման հինգ տարվա ընթացքում հրատարակվել և դպրոցներին են տրվել 112 անուն դասագիրք և 47 անուն ուսուցչի ձեռնարկ, ինչը կազմում է մոտ 6074900 հատ դասագիրք և 134000 հատ ուսուցչի ձեռնարկ:

Ծրագրի արդյունքում հիմնվել և ներկայում գործում է Դասագրքերի շրջանառու հիմնադրամը, որի միջոցով 1997 թվականից Հայաստանի բոլոր դպրոցներում ներդրվել և առ այսօր հաջողությամբ գործում է դասագրքերի վարձակալության համակարգը: Այդ համակարգը թույլ է տալիս ապահովել ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հիմնական առարկաների դասագրքերի տպագրության շարունակականությունը, այսինքն՝ ստեղծում է երաշխիք, որ վարձույթից կուտակված գումարներով դպրոցները վարկային ծրագրի ավարտից հետո կկարողանան ինքնուրույն ձեռք բերել, տպագրել նոր դասագրքեր: Վարձակալական սկզբունքի կիրառման արդյունքում դասագրքերի գները իջեցվել են շուկայականից առնվազն 4-ից 5 անգամ:

Ծրագրով դրվեց «Կրթության կառավարման ամբողջական տեղեկատվություն» համակարգի հիմքը: Մինչև 1999թվականը Հայաստանում գոյություն չունեին հանրակրթությանն առնչվող վիճակագրական տվյալների և հաշվետվությունների հավաքման և վերլուծման միասնական համակարգ: Հանրակրթական ուսումնական հաստատությունների վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվում էր հին մեթոդներով, որոնք չեն բավարարում տեղեկատվությանը ներկայացվող ժամանակակից պահանջներին: «Կրթության կառավարման և ֆինանսավորման բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում աշխատանքներ սկսվեցին Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ներդրման ուղղությամբ, որը թույլ է տալիս տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ապահովել հանրակրթական համակարգի վիճակագրական տվյալների օպերատիվ հավաքագրում, մշակում և վերլուծում՝ ինչպես առանձին մարզերի, այնպես էլ հանրապետության մասշտաբով:

Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ, որին մասնակցել են բարեփոխումների փորձնական ծրագրում ընդգրկված դպրոցների ղեկավար և աղմինիստրատիվ կադրերը: Դասընթացներով նպատակ է հետապնդվել վերջիններիս մոտ զարգացնել դպրոցների ինքնուրույն ֆինանսատնտեսական գործունեությունն ապահովելու, կառավարման և տնտեսավարման նոր պահանջներին համապատասխան կարողությունների զարգացումը:

Այս ծրագիրը հիմք ստեղծեց հաջորդ վարկային ծրագրի համար միջոցների ներգրավման և համակարգում շարունակվող բարեփոխումների համար:

2004 թվականի հունվար ամսից սկսվեց «**Կրթության որակի և համապատասխանության**» վարկային ծրագիրը, որը տևելու է մինչև 2008 թվականի դեկտեմբեր ամիսը: Ծրագրի ընդհանուր արժեքը գնահատված է 21.7 միլիոն ԱՄՆ դոլար, որից ԶԲ-ի կողմից տրամադրվել է 13.2 միլիոն SDR-ի վարկ, որը համարժեք է 19 միլիոն ԱՄՆ դոլարի: Այս վարկի պայմանները գրեթե նույնն են, ինչ նախորդինը, բացի մարման ժամկետներից: Այն Կառավարությանը տրամադրվել է 40 տարով, որից դարձյալ 10 տարին արտոնյալ է: Ներկա դրությամբ վարկային միջոցներից կատարվել է շուրջ 10.3 միլիոն ԱՄՆ դոլարի ծախս: Ծրագրի միջոցները և նպատակները ուղղված են հետևապես հիմնական ոլորտներին՝ 80 տոկոսը հանրակրթությանը, որից 40 տոկոսը տարրական կրթության և 40 տոկոսն էլ միջնական կրթության, 10 տոկոսը ուղղվելու է պետական կառավարման ոլորտին, 10 տոկոսը սոցիալական աջակցության և գործազրկության նպաստների ոլորտներին:

Ընդհանուր առմամբ այս ծրագրի նպատակը կրթության ոլորտում հանրակրթության որակի բարձրացումն է՝ արդիականացնելով հանրակրթության բովանդակությունը, ներդնելով կրթության որակի վերահսկման և գնահատման միասնական համակարգ: Այն ենթադրում է նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում կրթության համակարգում, ուսուցիչների գիտելիքների անըդհատ բարելավում, հանրակրթության ոլորտում շարունակական բարեփոխումների իրականացում:

«Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի իրականացումը բացառիկ հնարավորություն է տվել ապահովելու անցումը 12-ամյա միջնակարգ կրթության:

Այս ծրագրի շրջանակներում է մշակվել «Հանրակրթության պետական կրթակարգը», որը արժանացել է ՀՀ կառավարության հավանությանը, որն իր բնույթով և նշանակությամբ Հայաստանում առաջին անգամ ներդրվող փաստաթուղթ է: Այն ամրագրում է կրթական քաղաքականության հիմնական դրույթները, միջնակարգ կրթության, նախադպրոցական և հատուկ կրթության պետական չափորոշիչների և հանրակրթական առարկաների չափորոշիչների մշակման ընդհանուր սկզբունքները, սովորողներին և ուսուցիչներին ներկայացվող հիմնական պահանջները: Կրթակարգը Հայաստանի անկախության վերականգնումից հետո ստեղծված առաջին փաստաթուղթն է որտեղ հստակ սահմանված է դպրոցին և ուսուցչին ներկայացվող պետական-հասարակական պատվերը՝ միջնակարգ կրթության արդյունքում շրջանավարտի սպասվելիք նկարագրի, նրա կատարելատիպի վերաբերյալ:

Ինչպես նաև ծրագրի արդյունքում մշակվել և ՀՀ կառավարության որոշումներով հաստատվել են «Հանրակրթության պետական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը» և դրան համապատասխան «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը»:

«Հանրակրթության պետական կրթակարգի» և «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչի» հիման վրա անմիջապես սկսվել են 12-ամյա հանրակրթական դպրոցի առարկաների չափորոշիչների և ծրագրերի ստեղծման ու ներդրման աշխատանքները:

Ծրագրով նպատակ է հետապնդվում նաև տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով բարձրացնել սովորողների առաջադիմությունն ու կատարելագործել դասավանդման որակը՝ նպաստելով ուսումնական գործընթացի ժամանակային և տարածական սահմանափակումների վերացմանը: Ծրագրի իրականացման պլանի մշակման փուլում նախատեսվեց դպրոցներում համակարգչային ուսումնական կենտրոնների (ԴՀՈՒԿ) ստեղծումը:

ԴՅՈՒԿ-ը համակարգչային դասասենյակ է՝ հագեցված տարաբնույթ գրականությամբ, տեղեկատվական և էլեկտրոնային ուսումնական նյութերով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների հանրակրթությունում ներդնելու ծրագրի կարևոր մասն է համապատասխան առարկայական բովանդակության ստեղծումը: Մասնավորապես, նախատեսվում է մշակել առարկայական համակարգչային ծրագրեր հանրակրթական դպրոցների հիմնական դասընթացների համար, ինչպես նաև ստեղծել բազմաֆունկցիոնալ ինտերնետ համացանց:

Այժմ ընթացքի մեջ են երկրաչափություն, հանրահաշիվ և հայոց լեզու առարկաների համակարգչային ծրագրերի, ինչպես նաև դպրոցական ինտերնետ պորտալի մշակման աշխատանքները:

Ծրագրի կարևոր բաղադրիչ է կազմում հանրակրթության ոլորտի կառավարման և ֆինանսավորման բարեփոխումներին շարունակական աջակցումը, հանրակրթական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացումը և հանրակրթության կառավարման կարողությունների զարգացումը կառավարման բոլոր օղակներում, սոցիալական աջակցության կազմակերպումն աշխատանքից դուրս մնացած ուսուցիչներին: Այս բաղադրիչի գործառույթների իրականացման արդյունքում պետք է ապահովվեն հիմնական հետևյալ ցուցանիշները՝

- մեկ ուսուցչին ընկնող սովորողների թիվը հասցնել 15.1,
- բարձրացնել դասարանների միջին խտությունը՝ ներկայիս 20-ից հասցնել 23.44-ի:

Այս ցուցանիշների հասանելիության ապահովումը ենթադրում է մանկավարժական հաստիքների կրճատում և ծրագրով նախատեսված է նաև կրճատման հետևանքում գործազրկության մատնվող ուսուցիչների տարբեր սոցիալական ծրագրերի միջոցով տրամադրել աջակցություն՝ այլ մասնագիտության վերապատրաստման, նոր աշխատանք փնտրելու և այլ աշխատանքի վայր տեղափոխվելու, ինչպես նաև որոշակի դրամական փոխհատուցման տրամադրում:

## **Առողջապահության ոլորտում 2007 թվականին արտաքին օժանդակությամբ իրականացվող ծրագրեր**

Ինչպես արդեն նշվեց, Առողջապահության ոլորտում մինչ օրս արտաքին վարկային միջոցներով իրականացված ծրագրերից 3-ն հիմնականում ուղղված են եղել ոլորտում առկա խնդիրների հարթմանը և ոլորտի հետագա զարգացման ապահովմանը:

Առողջապահության ոլորտում վարկային առաջին ծրագիրը ՀԲ վարկային միջոցներով իրականացված «Առողջապահության ֆինանսավորման և առողջության առաջնային պահպանման» ծրագիրն է եղել: Ծրագրի ընդհանուր արժեքը գնահատված էր 12.1 միլիոն ԱՄՆ դոլար, որից ՀԲ-ի կողմից տրամադրվել է 7.2 միլիոն SDR-ի կամ շուրջ 10 միլիոն ԱՄՆ դոլարի վարկ: Ծրագիրը սկսվել է 1997-ին և ավարտվել 2003 թվականի վերջին: Ծրագրի ավարտին վարկային միջոցներից փաստացի ծախսը կազմել է շուրջ 9.3 միլիոն դոլար: Վարկը Կառավարությանը տրամադրվել է արտոնյալ պայմաններով, այն է՝ 0 տոկոս տոկոսադրույքով և 10 տարի արտոնյալ ժամկետով: Վարկի մարման ընդհանուր ժամկետը 35 տարի է:

Ծրագրային գործողություններն իրենց ոլորտային պատկանելությամբ ունեցել են հետևյալ բաշխվածքը՝ ծրագրի միջոցների 68 տոկոսն ուղղված է բուն առողջապահության ոլորտին, 32 տոկոսը՝ պետական կառավարմանը և առողջապահության պետական ֆինանսական կառավարմանը:

Ծրագրի հիմնական նպատակն է եղել բարձրացնել առողջության առաջնային պահպանման ծառայությունների որակը, պետական միջոցների ծախսման արդյունավետությունը, այդ միջոցների ծախսումը դարձնել նպատակային, ապահովել համայնքների մասնակցությունը

տեղական առողջապահական խնդիրների գերակայությունների որոշման եւ առողջապահական հիմնական ծառայությունների պահպանման խնդրում:

Ծրագիրը բաղկացած է եղել երկու մասից: Առաջին մասով նախատեսվում է կրթական ծրագրերի մշակում եւ Առողջապահության ազգային ինստիտուտում, Պետական բժշկական համալսարանում եւ Բժշկական ուսումնարանում դրանց ուսուցման կազմակերպում՝ առողջության առաջնային պահպանման ծառայություններ իրականացնողների համար, ուսումնական հաստատությունների նորոգում՝ դրանք ապահովելով համապատասխան սարքավորումներով, աջակցում հիվանդությունների կանխարգելմանը, ախտորոշման եւ բուժման վերաբերյալ կրթական ծրագրերի և առողջության առաջնային պահպանման ուղեցույցների մշակմանը, ինչպես նաեւ դրանցով ուսուցման կազմակերպմանը:

Ծրագրի երկրորդ մասը վերաբերվել է առողջապահության ֆինանսավորման համակարգին, որի շրջանակներում օժանդակություն է տրամադրվել Առողջապահության պետական գործակալության հիմնադրամին, Առողջապահության նախարարությանը տրամադրվել են գրասենյակային սարքավորումներ, համակարգչային տեխնիկա եւ համապատասխան ծրագրեր, տեխնիկական օժանդակություն է տրամադրվել ֆինանսական եւ առողջապահական վերլուծություն կատարող մասնագետների վերապատրաստման հարցում:

Ծրագրի արդյունքում նախկին Խորհրդային Միության հանրապետություններից Հայաստանում առաջինը սկսվեց Ընտանեկան բժիշկների ինստիտուտի կայացման աշխատանքները և ծրագիրը թույլ տվեց վերապատրաստել և կրթել ընտանեկան բժիշկներ և բուժքույրեր՝ հիմնվեց Ընտանեկան բժիշկների վերապատրաստման կենտրոն, Բժշկական համալսարանում, Առողջապահության ազգային ինստիտուտում և Պետական բժշկական ուսումնարանում բացվեցին ընտանեկան բժշկության ամբիոններ, որոնք համալրվեցին համապատասխան նյութատեխնիկական բազայով:

Ծրագիրը թույլ տվեց գյուղական համայնքներում կառուցել թվով 54 նոր ամբուլատորիաներ և վերանորոգել 22 ամբուլատորիա, ինչպես նաև ամբուլատորիաները զինել նորագույն տեխնիկայով և գույքով, այդ թվում բնակչության սպասարկման համար նախատեսված շտապ օգնության մեքենաներով:

Առողջապահության ոլորտում իրականացվող հաջորդ վարկային ծրագիրը **ՀԲ աջակցությամբ իրականացվող Առողջապահական համակարգի արդիականացման ծրագիրն է:** Այս ծրագիրը սկսվել է իրականացվել 2004 թվականից, իսկ ծրագրի ավարտը նախատեսվում է 2009 թվականին: Ծրագրի ընդհանուր արժեքը 25.5 միլիոն ԱՄՆ դոլար է, որից ՀԲ կողմից կտրամադրվի 13 միլիոն SDR-ի վարկ, որը համարժեք է շուրջ 19.0 միլիոն ԱՄՆ դոլարի, ճապոնական կառավարության կողմից կտրամադրվի 1.25 միլիոն ԱՄՆ դոլարի դրամաշնորհ, 5.2 միլիոն ԱՄՆ դոլարը կծախսվի երկրի ներքին ռեսուրսների հաշվին, ինչպես նաև ծրագրին 100 հազար ԱՄՆ դոլարի չափով իրենց մասնակցությունը կունենան ծրագրի շահառու համայնքների Տեղական իշխանությունները: Այս վարկը նույնպես տրամադրվել է արտոնյալ պայմաններով՝ 0 տոկոս տոկոսադրույքով և 10 տարի արտոնյալ ժամկետով: Ի տարբերություն նախորդ վարկի, այս վարկի մարման ժամկետը 40 տարի է:

Ծրագրի միջոցները և նպատակներն ըստ ոլորտային բաշխման ունեն հետևյալ կառուցվածքը՝ 90 տոկոսն ուղղվելու է առողջապահության ոլորտին, իսկ մնացած 10 տոկոսը՝ առողջապահության պետական ադմինիստրատիվ և ֆինանսական կառավարմանը:

Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրի հիմնական նպատակներն են՝ մատչելի և հասանելի դարձնել որակյալ առաջնային բուժօգնությունը, բարելավել հիվանդանոցային համակարգի որակն ու արդյունավետությունը և ստեղծել ամուր հիմքեր առողջապահության ոլորտում արդյունավետ քաղաքականության և մոնիտորինգի իրականացման համար: Ծրագրային հիմնական բաղադրիչներն են՝

- **ընտանեկան բժշկության համակարգի զարգացումը.** բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է հանրապետությունում զարգացնել և բարելավել ընտանեկան բժիշկների և ընտանեկան բուժքույրերի վերապատրաստման կրթական կարողությունները՝ ստեղծել կրթական կենտրոններ, հագեցնել դրանք անհրաժեշտ ուսումնական, գրասենյակային, բժշկական սարքավորումներով, տրանսպորտային միջոցներով, պատրաստել ուսումնական ուղեցույցներ և վերապատրաստել ուսուցումը կազմակերպող դասախոսներին: Բացի այդ նախատեսվում է ուսուցանել և վերապատրաստել ընդհանուր թվով շուրջ 1000 բժիշկ և նույնքան բուժքույր: Բաղադրիչը նախատեսում է նաև առողջության առաջնային պահպանման մի շարք հաստատությունների վերանորոգում և թվով 6 նոր ամբուլատորիաների կառուցում,
- **հիվանդանոցային համակարգի զարգացումը.** բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է որոշակի թվով ընտրված հիվանդանոցներում իրականացնել վերակազմակերպման և արդիականացման գործընթացներ, որոնք կվերաբերվեն թե՛ վերջինների ղեկավարման և կառավարման համակարգերին և թե՛ դրանց նորագույն սարքավորումներով հագեցմանը,
- **Կառավարության հզորությունների ուժեղացումը՝ առողջապահական քաղաքականության մշակման և իրականացման արդյունավետության վերահսկման նպատակով.** բաղադրիչն ընդգրկում է ոլորտի գործունեության արդյունավետության գնահատման կարողությունների ստեղծումը, հանրային առողջապահության համակարգի զարգացումը և ոլորտում պետական ծախսերի կառավարման բարելավումը:

2007-ին ոլորտում մեկնարկեց, նոր՝ **Համաշխարհային բանկի (ՅԲ) աջակցությամբ իրականացվող Թռչնագրիպին հակազդելու վարկային ծրագիրը**, որի համար ընդհանուր առմամբ կտրամադրվի 4.4 միլիոն SDR-ի վարկ, որը կազմում է շուրջ 6.25 միլիոն ԱՄՆ դոլար: Ծրագիրը սկսվել է 2006 թվականի փետրվարին և կտևի մինչև 2009 թվականի հուլիս ամիսը: Այս վարկը նախորդների նման նույնպես արտոնյալ վարկ է և մարման ժամկետը 40 տարի է:

Տվյալ վարկային ծրագրի նպատակներն են՝

- ընտանի թռչունների շրջանում բարձր ախտածին թռչնագրիպի վարակով և կենդանիների այլ հիվանդություններով մարդկանց համար առաջացող վտանգի նվազեցումը,
- մարդկանց միջավայրում գրիպի վարակի և վարակիչ այլ հիվանդությունների բռնկումների հսկողությունը և դրանց արագ արձագանքը:

Այս նպատակների իրագործման համար 2007 թվականի ընթացքում նախատեսվում է ձեռք բերել պաշտպանիչ արտահագուստ, բժշկական մահճակալներ, համապատասխան տրանսպորտային փոխադրամիջոցներ, արագ ախտորոշման թեստեր, ախտահանիչ նյութեր և հակավիրուսային դեղորայք: Բացի այդ նախատեսվում է իրականացնել կապիտալ ներդրումներ և նորոգման աշխատանքներ «Սյունիքի մարզային փորձագիտական կենտրոնում» և «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոցում:

Նշված երեք ծրագրերից բացի այս ոլորտում միջոցներ են ծախսվել նաև **ՅԲ աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի վարկային ծրագրի միջոցներից, որոնք հիմնականում ուղղված են եղել** կապիտալ ներդրումների, այդ թվում՝ կապիտալ շինարարության և կապիտալ ակտիվների ձեռքբերման ծախսերի ֆինանսավորմանը: Այս ծրագրի հիմնական նպատակն է աջակցել աղքատների և առավել խոցելի խմբերի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված Կառավարության քաղաքականությանը՝

1. աղքատ համայնքներում, հատկապես առավել խոցելի խմբերի համար, մեծացնել համայնքային ենթակառուցվածքների և ծառայությունների տարածվածությունը և առավել մատչելի և որակյալ դարձնել դրանք,
2. համայնքներում լրացուցիչ ինստիտուցիոնալ հնարավորություններ ստեղծել՝ ծառայությունների տրամադրման և ներդրումների որակն ու կայունությունն ապահովելու, հաշվետվողականության բարձրացման և շահառուների իրավունքների ընդլայնման համար: